ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՌ-ՄԱԾԲ-23/08

ք. Երևան «11 հունվար» 2023թ.

«Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն>> ՓԲԸ-ը, ի դեմս գործադիր տնօրեն Գ.Խումարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖՈՏՈԼՈՒՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիմանվրա (այսուհետ՝Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է լուսանկարչական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Սույն պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2023թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իրհայեցողությամբսահմանելովանպատշաճորակի ծառայությունը պայմանագրինհամապատասխանող ծառայությամբանհատույցփոխարինմանողջամիտժամկետ կպահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվելպայմանագիրըկատարելուցևպահանջելվերադարձնելու ծառայության համարվճարվածգումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը.

2.1.3 Միակողմանիլուծելպայմանագիրը, եթե Կատարողնէականորենխախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտելնէականէհամարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

...ջև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը ...ատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ...ող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույնպայմանագրով և սույնպայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժիազդեցությանհետևանքով, որը ծագել է սույնպայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսիհիրավիճակներեներկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականևարտակարգդրությունհայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցությանմիջոցներիաշխատանքիդադարեցումը, պետականմարմիններիակտերըևայլն, որոնքանհնարինենդարձնումսույնպայմանագրովպարտավորություններիկատարումը:Եթեարտակարգուժիազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապակողմերից յուրաքանչյուրնիրավունքունի լուծելպայմանագիրը՝այդմասինանախապես տեղյակպահելով մյուսկողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1 Պայմանագիրնուժիմեջէմտնումկողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

7.2 Պայմանագրիցծագածկողմիվճարայինպարտավորությունչիկարողդադարելայլպայմանագրիցծագած՝հակընդդեմ պարտավորությանհաշվանցով, առանցկողմերիգրավորևկնիքովհաստատվածհամաձայնության: Պայմանագրիցծագածպահանջիհիրավունքըչիկարողփոխանցվելայլանձի, առանցպարտապանկողմիգրավորհամաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 ՊայմանագրումփոփոխություններևլրացումներկարողենկատարվելմիայնԿողմերիփոխադարձհամաձայնությամբ՝համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայությանմատուցմանժամկետըկարողէերկարածգվելմինչև պայմանագրով այդժամկետըլրանալը՝Կատարողիառաջարկությանառկայությանդեպքում՝ պայմանով, որՊատվիրատուիմոտչիվերացելծառայությանօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայությանմատուցմանժամկետըկարողէերկարածգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման ... ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1,N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվումէ պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<Հայաստանի Հանրային	**ԿԱՏԱՐՈՂ**
Ռադիոընկերություն>>ՓԲԸ	«ՖՈՏՈԼՈՒՐ» ՍՊԸ
Ք.Երևան Ալեք Մանուկյան-5	ք. Երևան Պուշկինի 3ա
ՀՎՀՀ 01541435	ՀՎՀՀ 02560325
Հայբիզնեսբանկ ՓԲԸ	ԱՐԴՇԻՆՏԲԱՆԿ
Հ/Հ 1150009581381374	հ/հ2470139206960000
Գործադիր տնօրեն Գ.Խումարյան	Տնօրեն՝ Մելիքբաղդասարյան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1
<< 11 >>հունվար 2023թ. կնքված
ՀՀՌ-ՄԱԾՁԲ-23/08ծածկագրով պայմանագրի

ՀՀդրամ

Ծառայության						
հրավերովնախատեսվածչափաբաժնիհամարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	չափմանմիավորը	ընդհանուրգինը/ՀՀդրամ	ընդհանուրքանակը	մատուցման	
					հասցեն	ժամկետը**
1	79961100/1	դրամ	360000	1	Ք.ԵրևանԱլեքՄանուկյան 5	Պայմանագիրնուժիմեջմտնելուցմինչև 31.12.2023

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն>>ՓԲԸ
Ք.Երևան Ալեք Մանուկյան-5
ՀՎՀՀ 01541435
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1550009581381374
Տնօրեն Գ.Խումարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՖՈՏՈԼՈՒՐ» ՍՊԸ
Ք. Երևան Պուշկինի 3ա
ՀՎՀՀ 02560325
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ
հ/հ2470139206960000
Տնօրեն՝ Մելիք Բաղդասարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 11 » հունվար 2023 թ. կնքված
ՀՀՌ-ՄԱԾՁԲ-23/08 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանո վնախատեսված միջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79961100/1	Լուսանկարչական ծառայություններ	0	300000	600000	900000	1200000	1500000	1800000	2100000	2400000	2700000	3000000	3600000	360000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
,Հայաստանիհանրային
ռադիոընկերությունՓԲԸ
ք.ԵրևանԱլեքՄանուկյան 5, 0025
ՀՎՀՀ 01541435
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150009581381374
Գործադիրտնօրեն՝
Գ.Խունդարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՖՈՏՈԼՈՒՐ» ՍՊԸ
ք. Երևան Պուշկինի 3ա
ՀՎՀՀ 02560325
ԱՐԴՇԻՆՏԲԱՆԿ
հ/հ2470139206960000
Տնօրեն
Մելիք
Բաղդասարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
ե 20 թ. կնքված